Տ. ՏԱԹԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԿԱՐԵՎՈՐ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Հայ-հոլանդական կապերը դարերի պատմություն ունեն: Արդեն XIIIդ. հոլանդական վաճառականներն այցելում էին Կիլիկիա, իսկ Ամստերդամ եկած հայ վաճառականների մասին հոլանդական աղբյուրներում հիշատակություններ հանդիպում են սկսած 1550-ական թվականներից: Առաջին հայ վաճառականների մասին եղած տեղեկության մեջ ասվում է, որ նրանք Ամստերդամում վաճառել են մարգարիտ և ադամանդներ[1]:

Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթից հետո հայ վաճառականներից ոմանք, ովքեր կապեր ունեին Հոլանդիայի հետ, ընտանիքներով հաստատվել են Ամստերդամում: Հոլանդիայի ժամանակագիրներից Վան Էմդրեն այս մասին գրում է. «XVII դարում հայոց երկրի մի մասը, հարձակման և ավերման ենթարկվելով, հայերը ստիպված են եղել այնտեղից գաղթել: Նրանցից ոմանք եկել և հիմնավորվել են Ամստերդամում»[2]:

Այս կապերն և հայերի Հոլանդիա առևտրական գործերով գնալն ու այնտեղ հաստատվելը առավել են տարածվում 1612թ. Հոլանդիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրից հետո, որի կետերից մեկով նշվում էր, որ երկու երկրների քաղաքացիների հանդեպ փոխադարձ երթևեկի ժամանակ կրոնական խոչընդոտներ չպետք է հարուցվեն:

Հայ-հոլանդական առևտրատնտեսական հարաբերությունների ընդլայնումը հանգեցնում է նրան, որ 17-րդ դարի կեսերին Ամստերդամում արդեն բնակվում էր ավելի քան 70 հայ ընտանիք[3]:

Հոլանդիայում ձևավորված հայ համայնքի առկայությունը ևս իր դերն է ունեցել, որ Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից հայկական տպարան հիմնելու համար Իտալիա ուղարկված Մատթեոս դպիր Ծարեցին, հաջողություն չգտնելով Վենետիկում և Հռոմում, գնա Ամստերդամ և 1660թ. այնտեղ հիմնի այն տպարանը, որն այնուհետև Ոսկան Երևանցու անվամբ հայտնի էր դառնալու որպես Ոսկանյան տպարան:

Նույն այս շրջանին է վերաբերում և հայկական առաջին աղոթատան հիմնումը Ամստերդամում, որի մասին Ղևոնդ Ալիշանը գրում է. «Նշանակ յաճախութեան վաճառականաց հայոց յիշի եկեղեցի մեծ առ գերեզմանատան իւրեանց յանուն Ս. Կարապետի, որոյ վէմ մի մնայ և պահի արդ ի Մարսիլիա, արձանագրեալ յամի 1663-4, կազմեալ «Արդեամբք Ջաքարի որդւոյ Դաւթի Ճիւղայեցւոյ եւ ենթագրութեամբ Կարապետի բանի սպասաւորի»[4]:

Համանման ձևով է գրում և Սարուխանը. «Ամստերդամի գաղութի համար առաջին անգամ ԺԷ դարի կեսին զգալի եղաւ սեփական աղօթատուն ունենալու պէտքը: Գաղութի

---

[1] Տես **Սարուխան**, Հոլլանդիան եւ հայերը XVI-XIX դարերում, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1926, էջ 571:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 574:

[4] **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 495:

անդամներն այդ ժամանակ բաւական բազմացել էին և նրանց համար խորթ էր օտար եկեղեցին եւ անհասկանալի՝ օտար արարողութիւնը, մանաւանդ երբ շատերն արդէն հաստատուն բնակութիւն էին հիմնել եւ իրենց գերդաստանը բերել տուել: Նրանք, նախ ժամանակաւորապէս մի տուն վարձելով, 1663-ին այդ տունը յանուն Ս. Կարապետի՝ մատրան վերածեցին: Առաջին քահանան եղաւ Անդրիանեցի Կարապետ վարդապետն»[5]:

Կարապետ վարդապետ Անդրիանեցին Մատթեոս դպիր Ծարեցու վախճանվելուց հետո 1662թ. ավարտին է հասցնում 1661թ. սկսված «Սաղմոսարանի» տպագրությունը: Այս «Սաղմոսարանի» հիշատակարանում նա իրեն անվանում է «զՈսկան ռաբունապետի աշակերտ»[6]:

Կարապետ Անդրիանեցին հեղինակն է նաև 1662թ. Ամստերդամում լույս տեսած «Այբբենարանի», որի հիշատակարանում իրեն դարձյալ անվանելով Ոսկան Երևանցու աշակերտը, այնուհետև ասում է, որ հիշյալ «Այբբենարանը» տպագրվեց ոչ վասն վաճառման, այլ ձրի և ի փառս Քրիստոսի տացի ում եւ կարիք լիցի»:

1664թ. տպագրված «Սաղմոսարանի» հիշատակարանում Ոսկան Երևանցին ևս գրում է, որ Կարապետ վարդապետը իր աշակերտն է եղե. «...սեպհական աշակերտն իմ Կարապետ վարդապետ, որ էր յԱմստէրտամ»[7]:

Ոսկան Երևանցին նույն ձևով իր հեղինակած «Քերականության» հիշատակարանում է գրում. «Նաև զԿարապետ վարդապետն զաշակերտ իմ, որ բազմօք աշխատեցաւ ընդ իս ի սրբագրելն»[8]:

Ոսկանյան Աստվածաշնչի հիշատակարանում Կարապետ վարդապետն անվանվում է Ոսկանի հավատարիմ աշակերտը, ով աշխատել է նաև այլ գրքերի տպագրության վրա ևս. «Ընդ որս և զհաւատարիմ աշակերտն իմ զԿարապետ վարդապետ Անդրիանացի, որ միշտ և անձանձիր տքնեցաւ ի վերայ սրբագրութեանն և այլ գործոց»[9]: Ոսկանը Կարապետ վարդապետին անվանում է նաև «բանի սպասաւոր»[10]:

Մատթեոս Ծարեցու՝ Ամստերդամում հիմնած տպարանի պարտքերը վճարում և պարտատերերի բռնագանձումներից փրկում է Ոսկան Երևանցու եղբայր Ավետիս Ղլիճենցը[11], որն Ամստերդամ է հասնում այն ժամանակ, երբ Մատթեոսը գտնվում էր մահվան մահճում՝ շրջապատված իրեն սպառնացող պարտատերերով:

Փրկելով մեծ զոհողությունների գնով հիմնված տպարանը՝ Ավետիսը Ամստերդամ է կանչում իր եղբորը՝ Ոսկան վարդապետ Երևանցուն, որը Ուշիի Ս. Սարգիս վանքի վանահայրն էր: Մինչև վանահայրության հանձնելը և տպագրվելիք գրքերի համար համապատասխան ձեռագիր մատյաններ գտնելը Ոսկանը Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի գիտությամբ Ամստերդամ է ուղարկում իր աշակերտ Կարապետ վարդապետին, ով փաս-

---

[5] **Սարուխան**, Հոլլանդիան եւ հայերը, «Հանդէս ամսօրեայ», 1928, էջ 339:

[6] Նույն տեղում, էջ 40:

[7] Նույն տեղում, էջ 43:

[8] Նույն տեղում, էջ 50:

[9] Նույն տեղում, էջ 50:

[10] Նույն տեղում, էջ 53:

[11] Նույն տեղում, էջ 39:

տորեն ունենում է նաև տեղի հայ համայնքին հովվելու հանձնարարությունը:

Հայ համայնքի կողմից աղոթատուն դարձնելու համար վարձված տունը որպես մատուռ Ս. Կարապետի անվամբ կոչելը, կարծում ենք, ինչ-որ տեղ պայմանավորված է եղել նաև Կարապետ վարդապետի անվամբ: Քանի որ վարդապետը եկեղեցի և եկեղեցու սեղան օծելու իրավունք չուներ, ուստի կարելի է ենթադրել, որ այդ օծումը կատարել է Ոսկան Երևանցին, որը եպիսկոպոս էր, սակայն այդ ժամանակ ընդունված ձևով ի նշան իր ունեցած գիտության, անվանվում էր վարդապետ:

Հոլանդացի գիտնական Ֆ. Ե. Դուբիեզը հոլանդական աղբյուրների վկայակոչմամբ ևս գրում է, որ Ամստերդամի հայկական աղոթատունը կառուցվել է 17-րդ դ. երկրորդ կեսին և այն միտքն է հայտնում, որ այդ ժամանակ տեղի հայերի առաջնորդն է եղել Ոսկան Երևանցին. «Ամստերդամի հայերը 17-րդ դարի երկրորդ կեսին, այն ժամանակ, երբ հիմնեցին առաջին հայկական եկեղեցին, հավաքվում էին աղոթելու համար Դիկստրատի վրա գտնվող մի տան մեջ, որից մենք կարող ենք հետևեցնել նույնպես, որ Ոսկան եպիսկոպոսը ևս, որն անչափ բան է արել հայերեն լեզվով Աստվածաշունչը հրատարակելու համար, կարող էր միաժամանակ ղեկավարած լիներ կրոնական ժողովները Դիկստրատի ժամանակավոր եկեղեցում»[12]:

Ամստերդամի այժմյան հայկական Ս. Հոգի եկեղեցին կառուցվել է 1713-14թթ., որի հիմնարկեքը, ըստ Ալիշանի, կատարել է Թովմաս Վանանդեցին. «Բայց սկիզբն ԺԸ դարու շինեցին հայք նոր եկեղեցի 1714թ. Ս. Հոգի անուն, օժանդակութեամբ նշանաւոր և բազմաշրջիկ վաճառականի Պապաճանի որդի Սուլթանումի, որոյ արար նաւակատիս Թովմաս Վանանդեցի»[13]:

Սարուխանը, շեշտելով, որ նոր եկեղեցու կառուցումը անհրաժեշտություն էր դարձել, վերջինիս կառուցման մասին գրում է. «Առաջին հայ աղօթատունը բացի նրանից, որ վարձու, ուրեմն ժամանակաւոր շէնք էր, անյարմար տեղ էր գտնվում, ուստի գաղութը փնտռում էր աւելի յարմար մի վայր, որպէսզի յատուկ սեփական եկեղեցի կառուցանէ: «Հայերը, ասում է մի հոլանդացի պատմագիր, ինչպէս բոլոր արեւելեան ժողովուրդները, շատ էին սիրում արտաքին զարդարանքը, ուստի նրանք ոչ միայն իրենց սեփական եկեղեցին ուզեցին ունենալ, այլ իրենց վայել եւ ճոխ եկեղեցի, այս նպատակով երկար ժամանակ ժողովարարութիւն էին անում իրենց մէջ...»: Այս դիտաւորութիւնը վերջապէս իրագործվում է 1713-ին: Հայ վաճառականների աւագագոյն անդամները, որոնք աղօթարանի աթոռակալներն էին՝ Պապաջան Սուլթանեան և Նիկողայոս Թէոդորեան, յանուն հայ գաղութի աղերսագիր տուին Ամստերդամի քաղաքապետին, որով իրաւունք էին խնդրում իրենց դրամական միջոցներով, սեփական հայ եկեղեցի կառուցանելու: Քաղաքային վարչութիւնը յօժարութեամբ համաձայնուեց: Քաղաքային իշխանութեան 1713 հոկտեմբ 26-ի որոշման մէջ այսպէս է արձանագրուած այդ իրաւունքը. «Այստեղի հայ վաճառականների խնդիրքի հիման վրա, պատշաճաւոր խորհրդակցութիւնից յետոյ, բարի համարուեց արտօնել, որ նրանք այս քաղաքում մի տուն գնեն եւ եկեղեցիի վերածեն իրենց յա-

[12] **Ֆ. Ե. Դուբիեզ**, Հայերեն գրքերի տպագրությունը Ամստերդամում ԺԷ-ԺԸ դարերում. «Տեղեկագիր», 1963, հմ. 2, էջ 84:

[13] **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 459:

տուկ աստուածային պաշտամունքը կատարելու համար»[14]:

Ստանալով քաղաքային վարչության թույլտվությունը՝ հայ վաճառականները գնում են մի շինություն Ամստերդամի Ս. Հոգի հայոց եկեղեցու ներկայիս տարածքում, որը պահեստային մի շինություն էր, քանդում են այն և հանդիսավորապես կատարում եկեղեցու հիմնարկեքը, որին ներկա են լինում նաև Ամստերդամի քաղաքապետը և մի շարք այլ պաշտոնատար անձինք:

Ժամանակի ականատես տարեգիր Վագենարը (Wagenaar) կառուցվող եկեղեցու մասին գրում է. «Դա մի սիրուն շէնք էր վրայէ վրայ երկու կարգ պատուհաններով, ամէն մի կարգում՝ վեց հատ»[15]:

Ալիշանը, ինչպես տեսանք, գրում է, որ այս նոր եկեղեցու հիմնարկեքը կատարել է Թովմաս եպս. Վանանդեցին, որը, սակայն, վախճանվել է 1708թ., իսկ հայկական եկեղեցի կառուցելու թույլտվությունը Ամստերդամի քաղաքապետը տվել է 1713թ., ուստի և 1708թ. վախճանված եպիսկոպոսը չէր կարող կատարել հիմնօրհնեքը մի եկեղեցու, որի կառուցման թույլտվությունը տրվել է 1713թ.:

Արդ, ինչո՞վ է պայմանավորված ժամանակային այս անհամապատասխանությունը:

Ամստերդամի հայկական տպարանի անունը անխզելիորեն կապված է Ոսկան Երևանցու հետ, և այս տպարանը անվանվում է նաև Ոսկանյան: Միաժամանակ, Ոսկանը նաև այս շրջանում Ամստերդամում գտնված միակ բարձրաստիճան հայ հոգևորականն էր, որի հոգևոր իրավասությանն էր հանձնված և համայնքային կյանքը, քանի որ Ամստերդամի հայկական հրատարակությունների հիշատակարաններից երևում է, որ Ոսկանը Կարապետ վարդապետին համապատասխան կարգադրություններ է արել ոչ միայն որպես տպարանի պատասխանատու, այլև որպես եպիսկոպոս: Նաև անիմաստ կլիներ Կարապետ վարդապետի՝ Ոսկանի մոտ միայն որպես տպագրիչ աշխատելը, եթե նա չունենար համայնքային հոգևոր հովվի պարտականություններ և իրավասություններ:

Անհրաժեշտ է նշել, որ նույն ձևով, երբ Ոսկան Երևանցու հետ նա փոխադրվում է Լիվոռնո, դառնում է այնտեղի հոգևոր հովիվը՝ միաժամանակ Ոսկանի հետ այնտեղ հրատարակելով ևս երեք գիրք:

Հատկանշական է և պատահականություն ու պարզ զուգադիպություն չի կարելի համարել այն հանգամանքը, որ Թովմաս եպիսկոպոս Վանանդեցին Ամստերդամ է գալիս, երբ այնտեղից հեռացել և արդեն վախճանվել էին Ոսկան Երևանցին և Կարապետ վարդապետը:

Թովմաս Վանանդեցու և ընդհանրապես՝ Վանանդեցիների գործունեությունը Ամստերդամում դարձյալ հարաբերվում է Ոսկան Երևանցու և Ոսկանյան տպարանի հետ:

Թովմաս վարդապետ Վանանդեցին Գողթն գավառի Ս. Խաչ վանքի վանահայրն էր և դարձյալ եպիսկոպոս: 1660-ական թթ. վերջերին նա իր մորեղբոր որդու՝ Մատթեոս Հովհաննիսյանի հետ մեկնում է Եվրոպա:

1670թ. Մատթեոսը գնում է Լիվոռնո, ուր գրաշարություն է սովորում Կարապետ վարդապետից, քանի որ այդ ժամանակ Ոսկանը տպարանը Ամստերդամից փոխադրել էր

---

[14] **Սարուխան**, Հոլանդիան եւ հայերը, «Հանդէս ամսօրեայ», 1928, էջ 339-340:

[15] **Սարուխան**, Հոլանդիան եւ հայերը, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1928, էջ 340:

այստեղ, ապա հաջորդ տարում, երբ Ոսկանը տպարանն այնտեղից էլ փոխադրում է Մարսել, նրա հետ գնում է այնտեղ և շարունակում զարմանալի մի նվիրումով ծառայել հայկական տպագրությանը:

1679թ. իր եղբորորդիներին՝ Ղուկաս և Միքայել Նուրիջանյաններին, Թովմաս Վանանդեցին ուղարկում է Հռոմի Ուրբանյան վարժարանում սովորելու, իսկ 1683թ. դարձյալ գալով Մարսել՝ Մատթեոսին ուղարկում է Ամստերդամ՝ այստեղ հաստատելու հայկական տպագրությունը, որը վերսկսվում է 1685 թվականից: Ամստերդամում են հավաքվում Վանանդեցիների գերդաստանի այս չորս ներկայացուցիչները՝ Թովմաս վարդապետը Վանանդեցի, և Մատթեոս, Ղուկաս և Միքայել Նուրիջանյան Վանանդեցիները:

Ինչպես ասացինք, Թովմաս Վանանդեցին վախճանվել է 1708թ., իսկ մինչ այդ տպարանից հեռացել էին Միքայելն ու Մատթեոսը, և մենակ մնացած Ղուկաս Վանանդեցուն սկսում է օգնել Միքայելի որդին՝ Հովհաննես Վանանդեցին:

Այսպիսով, Թովմաս վարդապետ (եպիսկոպոս) Վանանդեցին ամստերդամյան իր գործունեության շրջանում մասնակցել է նաև համայնքի եկեղեցական կյանքի կազմակերպմանը, որի հիման վրա է Ալիշանը գրում, որ Թովմաս Վանանդեցին կատարեց Ամստերդամի հայկական եկեղեցու հիմնարկեքը:

Ինչպես Ոսկանյան շրջանի հետ էր կապված քաղաքի հայկական տպարանի հիմնումը, այնպես էլ Վանանդեցիների անվան հետ է կապվում հայկական նոր եկեղեցու կառուցումը, որին իր մեծ մասնակցությունն է բերում հատկապես Ղուկաս Վանանդեցին: Նա ոչ միայն գործուն մասնակցություն է ունենում եկեղեցու կառուցման համար հանգանակության կազմակերպմանը, այլև եկեղեցու կառուցումից հետո շարադրում է Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսին (կթղ. 1715-1725թթ.) ուղղված խնդրագիրը եկեղեցու օծման և այնտեղ սպասավորելու համար հոգևորական ուղարկելու խնդրանքով: Ինչպես Սարուխանն է գրում. «Այս ամենը կատարվում էր նոյն Վանանդեցիների ջերմ յորդորանքովն և բարոյական անդուլ աջակցութեամբը: Երբ շինութիւնը աւարտուեց, սկսան մտածել եկեղեցու օծման մասին եւ յանուն գաղութի հետեւեալ աղերսագիրն ուղարկուեց կաթողիկոսին: Աղերսագիրը գրողը նոյն անխոնջ Ղուկաս Նուրիջանեանն էր»[16]:

Հիշյալ դիմումնագիրը Սարուխանը հրատարակել է ըստ «Արշալոյս Արարատեանի»: Դիմումնագրին կից տրված խմբագրության բացատրությունում ասվում է, որ այս վավերագրի պատճենը իրենց է ուղարկել Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ատենադպիր Հարություն Տեր-Հովնանյանը 1861թ. հունվարի 10-ի թվակիր իր նամակով, որում գրված է. «Յամի 1855 ի լինելն իմ խուզարկու հնութեանց, ի թղթոց որք յանձնշան անկիւնս մառանաց Սրբոյ Ամենափրկչեան վանաց թափեալ կային ի փոշի, գտի զթերթ մի մագաղաթեայ գրեալ ի վաճառականաց Հայոց եղելոց յԱմստերդամ քաղաքի, յանուն Աստուածատրոյ կաթողիկոսի Սրբոյ Էջմիածնի: Ի սմին մագաղաթեայ թերթին ոչ գտանիւր ստորագրութիւն խնդրարկու վաճառականացն: Թուի ինձ թէ խնդրարկու վաճառականքն զայլ մագաղաթեայ թերթ նոյն խնդրագրոյ իւրեանց առաքեալ իցեն ի Սուրբ Աթոռն Էջմիածնի և զայն թերթ առանց ստորագրութեան իւրեանց, ականաւոր վաճառականքն հայոց որք յԱմստերդամ, գոլով ի Նոր-Ջուղայոյ, առաքեալ իցեն առ Առաջնորդն իւրեանց որ ի Ջու-

[16] Նույն տեղում, էջ 340-341:

ղա, իբրեւ տեղեկութիւն հաղորդելով նմա զայն գործ: Ի վաղուց հետէ եւ ցայսօր ժամանակի իսկ պահի սովորութիւն ի մէջ գերամեծար հնդկահայոց, զի մինչև սակս ազգային ինչ իրողութեանց հասարակապէս առնէին կամ առնեն թղթակցութիւն ինչ ընդ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, զգաղափար այլն առաքէին ի վանքն Ամենափրկիչ ընդ որոյ իրաւասութեամբն գտանին ինքնեանք, ի տեղեկութիւն առաջնորդի այնր վանաց»[17]:

Այսպիսով, այս նամակից իմանում ենք, որ հիշյալ խնդրագիրը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ատենադպիր Հարություն Տեր-Հովնանյանը 1855թ. գտել է Ս. Ամենափրկիչ վանքի վավերագրերի մեջ և որ այն գրված է եղել մագաղաթյա մի թերթի վրա: Հովնանյանը նշում է, որ այս խնդրագրի ներքո ստորագրություններ չեն եղել, և այս հանգամանքը բացատրում է նրանով, որ մագաղաթյա այդ թերթը իր հերթին պատճենն է եղել բուն խնդրագրի, որն ուղարկվել է Աստվածատուր կաթողիկոսին, իսկ պատճենը՝ Ս. Ամենափրկիչ վանք, քանի որ Ամստերդամի հայերը հիմնականում Նոր Ջուղայից էին գնացել և Նոր Ջուղայի առաջնորդին համարում էին իրենց առաջնորդը: Ահա այս պատճառով, ինչպես որ հնդկահայերն էին Մայր Աթոռ ուղղված իրենց գրությունների պատճենները ուղարկում Ս. Ամենափրկիչ վանք, այնպես էլ Ամստերդամի նոր ջուղայեցի վաճառականներն են վարվել:

«Արշալոյս Արարատեանում» տպագրված նամակում ասվում է, որ գտնված այդ վավերագիրը նույն 1855թ. Նոր Ջուղայի առաջնորդ Տ. Թադեոս արքեպիսկոպոսը ուղարկում է Մայր Աթոռ, որպեսզի Ս. Էջմիածինն այս վավերագիրը ևս օգտագործի Ամստերդամի հայկական եկեղեցու նկատմամբ իր ունեցած իրավունքները պաշտպանելու համար, քանի որ այդ շրջանում դրված էր եկեղեցու փակման և հայ համայնքից օտարման հարցը, որով վտանգվում էին և այդտեղ պահվող եկեղեցական հանդերձներն ու սպասքը, որոնք այնուհետև, Գևորգ Դ կաթողիկոսի ջանքերով վերադարձվեցին Ս. Էջմիածին:

Պատահական չէ և այս վավերագիրը հենց Զմյուռնիայում լույս տեսնող պարբերականում տպագրելը: Ամստերդամի հայ համայնքը ենթարկվում էր Զմյուռնիայի հայոց թեմի առաջնորդին, քանի որ Զմյուռնիան ծովափնյա քաղաք էր և ծովային ուղիղ ճանապարհով կապվում էր Ամստերդամին, և վերջինիս հոգևոր հովիվներին Զմյուռնիայի հոգևոր առաջնորդն էր նշանակում:

Ահա այս պատճառով հիշյալ վավերագիրը Ս. Էջմիածին ուղարկելուց հետո վերջինիս պատճենը ուղարկվում է Զմյուռնիա՝ տպագրելու, քանի որ վերջինիս հոգևոր իրավասության ներքո էր Ամստերդամի հայոց եկեղեցին:

Այսպիսով, Սարուխանի հրատարակած բնագիրը փաստորեն պատճենի պատճենն է, քանի որ բնագիրը Ամստերդամից ուղարկվել է Ս. Էջմիածին, իսկ պատճենը՝ Նոր Ջուղա և այս պատճենից կատարված ընդօրինակությունն է ուղարկվել Զմյուռնիա: Հիշյալ ընդօրինակությունը «Արշալոյս Արարատեանի» հիման վրա տպագրել է Սարուխանը՝ որպես Ամստերդամի հայ համայնքի դիմում՝ ուղղված Աստվածատուր Ա Համադանեցուն:

Մաշտոցի անվան Մատենադարանում Ամստերդամի հայ համայնքի պատմության մասին վավերագրեր որոնելիս մեզ անակնկալ կերպով հաջողվեց գտնել այս դիմումնագրից առաջ գրված համանման մեկ այլ դիմում, որը թվագրված է 1714 թվականի հունիսի

[17] «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա, 3 յունիս, 1861թ.:

տասով, այսինքն՝ ավելի քան մեկ տարի ավելի շուտ գրված և ըստ այդմ ուղղված արդեն ոչ թե նորընտիր Աստվածատուր կաթողիկոսին, այլ նախորդ տարում վախճանված Աղեքսանդր Ա Ջուղայեցուն (կթղ. 1706-1714թթ.):

Այսինքն՝ Ամստերդամի Հայոց եկեղեցին օծելու համար արդեն պատրաստ է եղել 1714թ. և տեղի հայ համայնքը այս, ինչպես նաև սպասավորող քահանա ուղարկելու համար դիմել է Աղեքսանդր Ա Ջուղայեցուն և մինչ նրանց դիմումը Ս. Էջմիածին կհասներ, վախճանվել է կաթողիկոսը, որից հետո հաջորդ տարի նույն խնդրանքով նրանք դիմել են արդեն նորընտիր Աստվածատուր կաթողիկոսին:

Մատենադարանում 1714թ. դիմումնագիրը պահվում է Մսերյանների արխիվում: Այն կազմված է տպագիր մեկ էջից, որի ներքո սակայն չկան դիմողների ստորագրությունները, որից կարելի է ենթադրել, որ այդ ստորագրությունները ներկայացվել են կից մի էջով և կամ էլ Ղուկաս Վանանդեցու տպարանում այս մեկ էջից մի քանի օրինակ է տպագրվել, որոնցից մեկը ուղարկվել է ստորագրությամբ, իսկ մյուսը կամ մյուսները պարզապես պահպանվել են, և նրանցից մեկը հայտնվել է Մսերյանների արխիվում:

Անկախ ստորագրություններից, քանի որ այս դիմումնագիրը ոչ թե ձեռագիր է, որ ընդօրինակություն լինի, այլ տպագիր, որով այն բնագրի արժեք ունի և Ամստերդամի հայ գաղութի պատմության շրջանակում ներկայացվում է առաջին անգամ, ուստի ստորև բերում ենք նրա բնագիրը ամբողջությամբ:

ԲԱՐՁՐԱԳԱՀ, ԻՆՔՆԱԿԱԼ՝ ԵՐԱՆԱԿԵՆՑԱՂ՝ ԵՐՋԱՆԿԱՊԱՏԻԻ, ԵԻ ՎԵՀԱՓԱՌ Դիտապետի և Արամեան բանաւոր հօտին՝ ի վայրի դալարուջ տաճողի՝ հոգևոր Հօրդ մերոյ Տեառն Աղեքսանդրի. երկնահանգէտ՝ և լուսաբնակ Ս[ուր]ք Էջմիածնի Տեղւոյն Աթոռակալիդ. սքանչելագործ՝ պարգևաբեր՝ և գերարփիաշնորհ Հօրն մերոյ Լուսաւորչի պանծալի Յառաջորդիդ և երանելի Տեղակալիդ մատուցանեմք՝ և ձօնեմք մեծաւ պատկառանօք և անշուշտ հընազանդութեամբ զողջոյն որդիական, նաև ակնակոր խոնարհութեամբ համբուրեմք զերկնաչու գարշապար Սրբութեան Ձերոյ մեք աստ յԱմստէլօդամ եղեալ ներքոգրեալ Հայկազուն նուաստ որդիք Սուրբ Աթոռոյդ:

ՅԱՅՏԱՐԱՐ ԻՐԱԸԶԳԱԾՈՒԹԻՒՆ ՍԱԿԱՒՈՒՔ ԼԻՑԻ ՀՕՐԴ ՄԵՐՈՅ Ի ՎԱՂԵՄԵԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՑ ՄԵՐԱԶՆԵԱՑ վտարանդի վաճառականքս վաճառաց աղագաւ օրընստօրէ յուրթացեալ՝ յաճախեմք աստ յայսմ ծովապարփակ, ջրմղախաղ տիեզերահռչակ, աշխարհախումբ, սքանչաշէն՝ բազմաբնակ՝ մարդախիտ, ամենահարուստ, մեծազօր, բարեկարգ, և իրաւադատ Ամստէլօդամ քաղաքի. վասն որոյ՝ հարկաւոր վարկեալ մեր որպէս որդւոց Սիօնի ունիլ մեզ առանձին տեղի սակս Քաւչարար սուրբ Պատարագի մատուցմանն. սահմանեցաք մեզ տեղի մի առանձին հանդերձ Քահանայիւ. ուր լսեմք միշտ և անխափան զԱստուածային պաշտօնն ըստ կարգի և օրինի Լուսաւորչական Եկեղեցւոյն:

Բայց տեղին այն գոլով անպատշաճ և վարձու կալեալ յառաջ քանզի տասնամեայ ժամանակս յօժարեցաք Հայկազնեայքս կանգնել աստ հաստահիմն եկեղեցի. այն ևս յայլ և այլ պատահմանէ մինչև ցայսօր յետնեալ մնաց: Իսկ այժմոյս բարեհաճութ[եամ]ք Հոգւոյն

Սրբոյ (որ յաջողէ զամենայն յամենայնի. որով եմք կեամք և շարժիմք) համախոհ՝ և միաբան հաւանութեամբ աստ եղեալ Արամազնեայ վաճառականքս գնեալ հաստահիմն տեղի մի եկեղեցւոյ՝ հրամանաւ Մեծազօր և բարձրաբերձ իշխանացն քաղաքիս՝ ձեռնարկաք շինել մեզ հարկաւոր, և զվաղեմէ փափաքեալ եկեղեցին հաստակառոյց հիմամբ ի փառս Ամէնօրհնեալ Փրկչին հանուրց. ի Պարծանս Լուսաւորչի Սուրբ աթոռոյն և ի հոգեշահ պայծառութիւն. նորին իսկ հօտին, որ ընդ ծայրածաւալ ոլորտս երկրի սփռեալ է: Մեծաւ ուրեմն թախանձանօք, և խնդրանօք հայցեմք ի Սրբազան Հօրէդ մեղմաբար ունկնդիր լինիլ համառօտաբանութեանս:

Հրամանաւ սուրբ աթոռոյդ միշտ լեալ է՝ աստ Քահանայ մի առ՝ ի կատարել զԱստուածային պաշտօնն մինչև ի վախճանումն Երևանեցի Տէր Յոհաննէսին. որոյ զկնի դոյզն ինչ անցեալ՝ եւս հրամանաւ Վեհիդ եկն աստ Յովակիմ վարդապետն միաբանիւքն հանդերձ որ աւելի Քան զամ մի մնացեալ գնաց աստի՝ ի մեծն Հոմ, ուր տակաւին դեզերալ յամէ. զորոյ աջոյն կամ ձախուն ոչ ունիմք խօսիլ միայն թէ աստ ոչ է տեղի Եպիսկոպոսի, այլ՝ մէն միոյ ևեթ Քահանայի ըստ ենթագրեալ սարասի: Յովակիմ վարդապետն յորժամ աստի՝ ի Հոմ ելանէր՝ եթող աստ ի գործ Քահանայութեան զիւր մատաղատունկ՝ և նորահասակ միայնակեաց մի երևանեցի, Տէր Եղիսէ անուամբ, որդի Փիլիպպոսի՝ ի Նորք գեղջէն. սա կամկար յօժարութեամբն ոչ կամի մնալ աստ. զոլով ինքն հասակաւ մատաղ՝ և կրօնակենցաղ, իսկ քաղաքս այս հոլանի, շպարադէմ և աշխարհի. աստէն փութայ գալ յ՝ոտս Վեհիդ. այսպիս սորին՝ ի մէնջ խընդրուած մեզ ևս քանզևս առաւել հաճոյ թուեցաւ սակս մատաղ հասակին՝ և կրօնակենցաղ վարուցն. մի՝ գուցէ թէ սա աստ իւիք սայթաքիցի: Ուստի միաբերան հաւանութեամբ խնդրեմք ի Բարձրագահէդ հոգալ մեզ և անընդհատ փութով առաքել այսր քահանայ մի՝ հասակաւ առոյգ, և գիտութեամբ կատարեալ. ոչ տնակալուչ կին ունօղ՝ այլ իցէ ըստ ըստ սահմանելոյն Պօղոսի. 1. Տիմ. 3. 2: իցէ աղ՝ որով անհամն յաղիցի. իցէ լոյս, որ լուսաւորիցէ զամենայն մարդ, իցէ ևս կարօղ ողջամիտ վարդապետութեամբ՝ ի դիպուկ ժամու (հրամանաւ վեհիդ) մեզ քարոզելոյ, և պատասխանելոյ հարցմանցն, զորս աստ առնեն մերթ այլազգեայ Բանասէրքն: Զիցէ քահանայն կանամբի. այլ՝ այրի, կամ կուսակրօն վանական, , որ մինչև՝ ի վախճան կենացն աստ մնայցէ: Ունիցի ի վեհէդ (եթե մարթ է) հրաման օծանելոյ զայս մեր նորակերտ Եկեղեցին. շնորհիցես ընդմա զերկու թուղթս, որոց մինն իցէ յանձնառական վասն քահանային, միւսն՝ պատուէր առ աստ եղեալ Հայկազուն ժողովուրդն զի, թէ քահանայն բանիւ իւիք կամ գործով վրիպիցի, կամ խոչընդակիցէ ընդդէմ մեր Եկեղեցական սահմանացն՝ և կարգացն, սոքա կարօղ իցեն խրատել զնա ըստ յանցանացն. որովհետև ոչ է մարթ յ՝աղօտ ժամանակի փոյթընդփոյթ ծանուցանել Սուրբ Աթոռոյդ զամենայն իրազեկութիւնս գոլով այս վայր մեծաւ միջոցաւ հեռացեալ այդի: Եւ մեք աստ եղեալքս խոստանամք հաստատել անշարժ գանձանակ անուամբ սուրբ Աթոռոյդ ուստի լոմայասարաս պտուղինչ մատուցցի սուրբ Տեղւոյդ զի աստ մերազնեայ բնակ գրեթէ և ոչ մի իսկ եկեղերթ վաճառականք ևս սակաւաթիւ, այսինքն տասնաթիւ կամ երեսնաթիւ. այս ևս երբեմնական:

Այս խնդիր հայցման մերոյ ի բարձրագահ վեհանձնութենէդ. որում միշտ՝ և յամ[ենայն] ուրեք մնամք հարազատ, և հնազանդ որդիքս ենթագրեալք:

Եղև յԱմստէլօդամ. յԱմի Տեառն 1714. և ի Թուին Հայոց 1163: Յունիսի 10: Հաւանու-

թեամբ ստորանիշ վաճառականացն՝ Բանահիւսութեամբ և Տպիւք Ղուկասու Դպրի Վանանդեցւոյ տպագրեալ[18]:

[18] Եր–անի Մատենադարան, Մեծյանների արխիվ, թղթապանակ 209, վավերագիր՝ 2405, տես նա– Հայ գիրքը 1512-1800թթ., էջ 786-788: